ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ
16 հոկտեմբերի 2024 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից համաֆինանսավորվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի հայտերի կազմման նպատակով նախատեսված ծրագրերի վերաբերյալ հանրային քննարկումների

Հանրային քննարկումը սկսվեց ժամը 15:00-ին

Ներկա էին՝

Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալներ Վ. Մակեյանը, Ա. Աջամօղլյանը, Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Սուքիասյանը, զարգացման ծրագրերի, տուրիզմի և արտաքին կապերի բաժնի պետ Մ. Մովսիսյանը, համայնքի ավագանու անդամ Ռ. Վարդանյանը, Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, վարչական շրջանի ղեկավարներ, համայնքի բնակիչներ:

Հանրային քննարկումը վարում էր Արթիկ համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանի կողմից լիազորված անձ՝ Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Վ. Մակեյանը:
Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը՝ 2025 թվականին Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից համաֆինանսավորվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի հայտերի կազմման նպատակով նախատեսված ծրագրերի վերաբերյալ հանրային քննարկումները: Նա խնդրեց ներկաներից հնչեցնել իրենց հարցերը, հանդես գալ առաջարկություններով և դիտողություններով:

Ելույթ ունեցան՝

1. Արթիկի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի և արտաքին կապերի բաժնի պետ Մ. Մովսիսյանը: Նա ընդհանուր գծերով ներկայացրեց 2025 թվականին Արթիկ քաղաքում իրականացելիք սուբվենցիոն ծրագրերը: Նա նշեց, որ 2025 թվականին սուբվենցիոն ծրագրեի հայտերը կազմվել են՝ հաշվի առնելով Արթիկ քաղաքի առաջնահերթությունները, Արթիկ համայնքի 5-ամյա զարգացման ծրագիրը, քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները: Ընդհանուր քննարկումների արդյունքում 2025 թվականին Արթիկ քաղաքի համար ներկայացվելու են 6 սուբվենցիոն ծրագրերի հայտեր:

1. **Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի ներհամայնքային ճանապարհների տուֆ քարով սալապատում**

Կամո փ.ղ, Բաբաջանյան փ.ղ, Բաբաջանյան փ.ղ 2-նրբ, Գրիգոր Զոհրաբ փ.ղ, Զորավար Անդրանիկ փ.ղ, Ղուկասյան փ.ղ, Սունդուկյանփ.ղ, Մաշտոցիփ.ղ, Գրիգոր Լուսավորիչ փ.ղ, Հակոբյան փ.ղ, Դուրյան փ.ղ, Անկախության փ.ղ 6-րդ.նրբ, Արթիկի թիվ 3-րդ գերեզմանատուն տանող ճանապարհ, Դեմիրճյան փ.ղ, Շիրազի փ.ղ:

2. **Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի Բաղրամյան փողոցի ասֆալտապատում և Գարեգին Նժդեհ փողոցի վերջնամասի մայթերի կառուցում**

3. **Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի <<Արթիկի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում**
4. **Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի 3 ՀՈԱԿ-ների,** Բաղրամյան 9/1 հասցեում գտնվող <<Արթիկի գեղարվեստի դպրոց>>ՀՈԱԿ-ի երկհարկանի շենքի և տանիքի հիմնանորոգում, Անկախության 20 հասցեում գտնվող <<Արթիկի Միսաք Մանուշյանի անվան գեղագիտական դաստիրակության կենտրոն>> ՀՈԱԿ-ի ջեռուցման համակարգի անցկացում և Անկախության 42 հասցեում գտնվող <<Արթիկի մարզադպրոց>> ՀՈԱԿ-ի շենքի տանիքի ծածկի հիմնանորոգում:

5. **Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի թվով 26 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում**

Լմբատ 1.44, Լմբատ 1.24, Լմբատ 1.7, Լմբատ 1.11, Լմբատ 1.12 , Լմբատ 1.14 , Լմբատ 1.10 , Լմբատ 1.6, Լմբատ 1.35, Լմբատ 1.43, Լմբատ 2.1, Լմբատ 2.26, Լմբատ 2.27, Լմբատ 2.5, Լմբատ 2.8, Լմբատ 2.14, Բաղրամյան 3, Տոնականյան 4, Տոնականյան 2, Տոնականյան 3,Սասունցի Դավիթ 19, Սասունցի Դավիթ 5, Շինարարների 5, Շինարարների 3, Սասունցի Դավիթ 21, Անկախության 15

6. **Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի կարիքների համար աղբատար մեքենաների և աղբամանների ձեռքբերում**

Նա ներկայացրեց, որ վերջին ծրագիրը վերաբերում է ոչ միայն Արթիկ քաղաքին, այլև ամբողջ համայնքն է դառնալու տվյալ ծրագրի շահառու:
Մ. Մովսիսյանն առանձին-առանձին ներկայացրեց բոլոր սուբվենցիոն ծրագրերի հայտերը:

1. **Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի ներհամայնքային ճանապարհների տուֆ քարով սալապատում**

Զեկուցողը ներկայացրեց, որ ֆինանսական միջոցների սահմանափակության պատճառով այս փողոցները գոյքագրվել են դեռևս 2023 թվականին, ավագանին հաստատել է ծրագրով ներկայացված փողոցների հիմնանորոգումը: Այժմ այս փողոցները ներկայացվում են 2025 թվականին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի ցանկում:
Կամո փ.ղ, Բաբաջանյան փ.ղ, Բաբաջանյան փ.ղ 2-նրբ, Գրիգոր Զոհրաբ փ.ղ, Զորավար Անդրանիկ փ.ղ, Ղուկասյան փ.ղ, Սունդուկյան փ.ղ, Մաշտոցի փ.ղ, Գրիգոր Լուսավորիչ փ.ղ, Հակոբյան փ.ղ, Դուրյան փ.ղ, Անկախության փ.ղ 6-րդ.նրբ, Արթիկի թիվ 3-րդ գերեզմանատուն տանող ճանապարհ, Դեմիրճյան փ.ղ, Շիրազի փ.ղ: Ընդհանուր՝ 15 փողոց՝ մոտ 15-20 հազ. քմ մակերեսով, միջինը մոտ 3 կմ ճանապարհի տուֆ քարով սալապատման մասին է խոսքը:

Մ. Մովսիսյանը ներկայացրեց, որ փողոցներ կան, որ ամբողջությամբ չեն սալապատվում, միայն փողոցների այն հատվածները, որոնք խիստ անանցանելի են:

Դուրյան փողոցում նախատեսվում է փլուզված պատի նորոգում: **Մաշտոցի** փողոցը ծրագրերում ներկայացված է երկու փուլով: Առաջին փուլով հիմնանորոգումն

ընթանում է հենց հիմա, իսկ երկրորդ փուլով՝ ամբողջ փողոցի շինարարությունը կավարտվի 2025 թվականին: Առաջին փուլն այս պահին ընթացքի մեջ է:
Գրիգոր Լուսավորիչ փողոցում նախատեսվում է մոտ 50-60 մետր հատված:
Համայնքի ավագանի Ռ. Վարդանյանն ասաց, որ այս հատվածում անհրաժեշտ է կատարել սալապատում, քանի որ անձրևներից առաջացած քարը, ցեխն ու ջուրն անմիջապես հոսում-լցվում է Սպանդարյան փողոց, որը, ինչպես հայտնի է, հիմնանորոգվել է ասֆալտապատման միջոցով ընդամենը 2 տարի առաջ և կարող է փչացնել Սպանդարյան փողացի, ինչպես նաև Գարեգին Նժդեհ փողոցի ասֆալտի շերտը:
Ռ. Վարդանյանն առաջարկեց Արթիկ քաղաքի Գր. Լուսավորիչ փողոցի 50-60 մ հատվածը ոչ թե բարեկարգել տուֆ քարով սալապատման միջոցով, այլև ասֆալտապատման միջոցով: Փողոցը բանուկ է, լայն, գտնվում է կենտրոնական հատվածում, Արթիկի երեք եկեղեցիների տանող ճանապարհն է:
Զեկուցող Մ. Մովսիսյանն ասաց, որ ինքը նույնպես ցանկանում է այս փողոցն ասֆալտապատել, սակայն ֆինանսական միջոցներից է կախված տվյալ հարցը:

2. **Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի Բաղրամյան փողոցի ասֆալտապատում և Գարեգին Նժդեհ փողոցի վերջնամասի մայթերի կառուցում:**

Զեկուցող Մ. Մովսիսյանն ասաց, որ մայթի շինարարությունը նախատեսված է եղել նախորդ ծրագրով մինչև Արթիկի թիվ 4 հիմնական դպրոց՝ ելնելով համայնքային բյուջեի սահմանափակ մրջոցներից: 2025 թվականին նախատեսվում է ավարտին հասցնել Գ. Նժդեհ փողոցի մայթի շինարարությունը:
Համայնքի ավագանի Ռ. Վարդանյանը հարցրեց, ինչու է գրված <<մայթ>> և ոչ <<մայթեր>> բառը, հավանաբար տեխնիկական վրիպակ կա: Այստեղ երկու կողմերից էլ մայթերի նորոգման կարիք կա:
Մ. Մովսիսյանն ընդունեց առաջարկությունը:
Բաղրամյան փողոցում մայթերը մինչև Արթիկի ծննդատան հատվածում արդեն իսկ հիմնանորոգված են եղել: Այդ ժամանակ նախատեսվա է եղել փողոցի ապագայում հիմնանորոգման հարցը: 2025 թվականին նախատեսվում է Բաղրամյան փողոցի Արթիկի շուկայից մինչև Արթիկի բշկական կենտրոնի շենքի հատվածի հիմնանորոգում ջրահեռացումով, կոյուղագծերով, Արթիկի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոնի մոտ կամուրջի կառուցմամբ: Նաև ներառվել է Բաղրամյան փողոցի վերջնամասի մայթերի հիմնանորոգում:

Ռ. Վարդանյանը հարցրեց՝ իսկ ինչ է լինելու 4-րդ հիմնական դպրոցի մոտ փլուզված պատի հարցը: Դպրոց և մանկապարտեզ հաճախող երեխաների համար անվտանգության խնդիր կա այստեղ, բացի այդ, Գ. Նժդեհ մայթի հիմնանորոգումն էլ կիսատ է մնացել փլուզված պատի պատճառով:
Նիստը վարող Վ. Մակեյանն ընդունեց առաջարկությունը և առաջարկեց այս ծրագրում ներառել նաև Գ. Նժդեհ փողոցի մայթի փլուզված պատի նորոգումը:

3. **Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի <<Արթիկի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում:**

Հիմնանորոգման ծրագրի մեջ մտնում է նաև մանկապարտեզի գույքի ձեռքբերումը, բակի վերանորոգումը, կահավորումը:

4. **Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի 3 ՀՈԱԿ-ների՝** Բաղրամյան 9/1 հասցեում գտնվող <<Արթիկի գեղարվեստի դպրոց>>ՀՈԱԿ-ի երկհարկանի շենքի և տանիքի հիմնանորոգում, Անկախության 20 հասցեում գտնվող <<Արթիկի Միսաք Մանուշյանի անվան գեղագիտական դաստիրակության կենտրոն>> ՀՈԱԿ-ի ջեռուցման համակարգի անցկացում և Անկախության 42 հասցեում գտնվող <<Արթիկի մարզադպրոց>> ՀՈԱԿ-ի շենքի տանիքի ծածկի հիմնանորոգման ծրագիրն է:

<<Արթիկի Մ. Մանուշյանի անվան գեղագիտական դաստիարակության կենտրոն>> ՀՈԱԿ-ում անհրաժեշտ է պատշաճ կերպով անցկացնել նոր ջեռուցման համակարգ, իսկ մյուս շենքերում՝ հիմնանորոգում:

5. **Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի թվով 26 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում**

Լմբատ 1.44, Լմբատ 1.24, Լմբատ 1.7, Լմբատ 1.11, Լմբատ 1.12, Լմբատ 1.14 , Լմբատ 1.10 , Լմբատ 1.6, Լմբատ 1.35, Լմբատ 1.43, Լմբատ 2.1, Լմբատ 2.26, Լմբատ 2.27, Լմբատ 2.5, Լմբատ 2.8, Լմբատ 2.14, Բաղրամյան 3, Տոնականյան 4, Տոնականյան 2, Տոնականյան 3,Սասունցի Դավիթ 19, Սասունցի Դավիթ 5, Շինարարների 5, Շինարարների 3, Սասունցի Դավիթ 21, Անկախության 15

Երեք տարի շարունակ Արթիկ քաղաքում իրականացվում են քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորագման ծրագրերեր: Այս խնդիրը համայնքի բնակիչների համար տարիներ շարունակ առաջնահերթություն է համարվել, անմխիթար վիճակում գտնվող տանիքները բնակիչներին մեծ անհարմարություններ են պատճառել:

1. **Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի կարիքների համար աղբատար մեքենաների և աղբամանների ձեռքբերում**

Նա ներկայացրեց, որ վերջին ծրագիրը վերաբերում է ոչ միայն Արթիկ բնակավայրին: Ամբողջ համայնքն է դառնալու տվյալ ծրագրի շահառու: Ձեռք է բերվելու երկու աղբատարեր, իսկ աղբամանները թվով 200-ն են՝ փակ, հարմարեցված նոր աղբատար մեքենաների համար: Աղբարկղերը նախատեսված են կենցաղային աղբի համար, որոնք հարմար են օգտագործելու համար, այն դատարկելու համար, իսկ բնակչությանը անհարմարավետություն չեն պատճառի: Աղբահանության ճիշտ կազմակերպման համար համայնքի ավագանի Ռ. Վարդանյանն առաջարկեց ԽՍՀՄ տարիների փորձը կրկին դարձնել կիրառելի. սեփական տների բնակիչներն աղբը կարող են հանձնել շրջիկ աղբատար մեքենային, իսկ բազմաբնակարան շենքերի բնակիչները կշարունակեն աղբը թափել աղբարկղերի մեջ:

Ձեկուցող Մ. Մովսիսյանն ասաց, որ Արթիկ համայնքի մի քանի բնակավայրերում այդ փորձը կա, և այս մոտեցումը շատ լավ աշխատում է գյուղական բնակավայրերում: Այդ գյուղական բնակավայրերում կենցաղային աղբի մնացորդներ փողոցներում գրեթե չկան:

Աղբատար լավ մեքենայի տեխնիկական բնութագրեր զարգացման ծրագրերի բաժինն ունի, մնում է ծրագրերի հաստատումից հետո հայտարարվի մրցույթ և համապատասխան ընթացակարգով կազմակերպվի գնման գործընթացը:

Նիստը վարող Վ. Մակեյանն Արթիկ համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանի և համայնքի բնակիչների անունից հայտնեց համայնքի դրական դիրքորոշումը ներկայացված ծրագրերի երաբերյալ:
Նիստն ավարտվեց ժամը 15:43-ին:

Նիստը վարեց՝

Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ՝
Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ՝ _____ Վ. Մակեյան

Արձանագրեց՝ Արթիկ համայնքի
ղեկավարի օգնական՝ _____Տ. Չարչյան

Հանրային քննարկման հեռարձակումը հետևյալ հղմամբ՝

Հանրային քննարկումներին մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

ՑՈՒՑԱԿ

2025 թվականին Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից համաֆինանսավորվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի հայտերի կազմման նպատակով նախատեսված ծրագրերի վերաբերյալ **հանրային քննարկման մասնակիցների**

16.10.2025 թ. ժամը 15:00-ին

Արթիկի համայնքապետարան

Հ/Հ	Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը	Հեռախոսահամարը	Զբաղվածությունը	Ստորագրությունը
1	[illegible]	098-500-788	[illegible]	[illegible]
2	[illegible]	094-90-95-73	[illegible]	[illegible]
3	Հովսեփ [illegible]	094-63-45-94	[illegible]	[illegible]
4	[illegible]	077-83-33-37	[illegible]	[illegible]
5	[illegible]	093-07-50-55	[illegible]	[illegible]
6	[illegible]	093 449400	[illegible]	[illegible]
7	[illegible]	093-912250	[illegible]	[illegible]
8	[illegible]	077-014888	[illegible]	[illegible]
9	[illegible]	093-320-321	[illegible]	[illegible]
10	[illegible]	094-771224	[illegible]	[illegible]
11	[illegible]	077852021	[illegible]	[illegible]
12	[illegible]	09964 6264	[illegible]	[illegible]

	[illegible]	077 67 [illegible] 03	[illegible]	[illegible]
13	[illegible]	093 62 60 69	[illegible]	[illegible]
14	[illegible]	093 24 74 84	[illegible]	[illegible]
15	[illegible]	077 072 052	[illegible]	[illegible]
16	[illegible]	098 148 402	[illegible]	[illegible]
17	[illegible]	094 010 666	[illegible]	[illegible]
18	[illegible]	093-33-88-49.	[illegible]	[illegible]
19	[illegible]	095 090 080	[illegible]	[illegible]
20	[illegible]	093 444 432	[illegible]	[illegible]
21	[illegible]	093 353 638	[illegible]	[illegible]
22	[illegible]	094-20-36-20	[illegible]	[illegible]
23	[illegible]	077-023 092	[illegible]	[illegible]
24	[illegible]	077-716-713	[illegible]	[illegible]
25	[illegible]	096 821 551	[illegible]	[illegible]
26				
27				
28				